

տարադ մատոյց եւ հակիրճ ու ազդու ատենախօսութեամբ մը դուրս ելանգուցեալ Սրբազանին պարզ, անենեղ, ազդասէր եւ անյիշատիք բնաւորութիւնն, եւ Աստուածային ներադրութիւնն հալցեց ի հաշտութիւն ոյն թրակիոյ ազդայնոց համար, որ յանիրաւի անվայել կերպով վարուած էին Հանգուցելոյն հետ, նորա Առաջնորդութեան վերջին տարիներն:

Ս. Թժուռն ըրաւ Բարձրաշնորհ Սրբազան Պատրիարք Հայրն, եւ թաղման հանդէսն խիստ փառաւոր շքով կատարեցաւ ի ներկայութեան բարձրատիւնն եկեղեցական Ս. Հարց եւ 6—7 հազարի չափ ժողովողան: Հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ պահաւանի աջ կողմն վերնատան սանդուխտն ներքեւ:

Հոգեւոյ Սրբազանն տանն տարւոյ չափ Պաշտօն Պատրիարքական մետրեքարի եւ փոխանորդի պաշտօն վարած է՝ Ս. Մատթէոս եւ Տ. Յակովբոս Սրբազան Պատրիարքաց օրովն. 24 տարի Առտոսիոյ առաջնորդութիւն ըրած եւ վերջին ատեններս Ազգային Երեսփոխանի եւ Կրօնական Դպրոցի Առնապետութեան պաշտօն վարած էր, եւ այլ եւս խել մը կրօնական եւ ազգային պաշտօններ հաւատարմաբար կատարած էր՝ եւ իւր ծառայութիւններուն մէջ միշտ իրեն տեսակէտ ընտրած էր Հայաստանեայց Ս. Եկեղեցին եւ Հայոց Ազգը: Ինքն այն կարգի եկեղեցական մ'էր՝ որ իւր կեանքէն նախամեծար կընտրէր Եկեղեցւոյ փառքն եւ ազգին իրաւունքն, շահն ու պատիւը, ինչպէս՝ որ ասոր ալ մի մեծ տաղանցի ընծայեց Բերայի գերեզմանատան խնդրոյն մէջ, որ անվերջ սրտիւ Ազգին ծայնն բարձրացոյց մեր Օգոստոսիոս Կայսեր առաջ:

Պոսեցւոց նա մանաւանդ Պայատու Պատուարժան Համարակութեամբ մեծ փառք մ'է՝ որ յիշեալ բազմաշխատ Սրբազանն իր ծերութեան վերջին տարիներուն մէջ խնամեցին եւ մխիթարեցին:

ԼՂԻ. Թ. 20, Մարտ 15.

ՆԵՐՍԷՍ Ս. ՊԱՏՐԻԱՐԿԻ

ՏԻՐԱՄԱՐԻՍ Ս. ՍԻՆԱՆՈՒՄԻ

Ս. ՍԻՆԱՆՈՒՄԻ

Ս. ՍԻՆԱՆՈՒՄԻ

Ս. ՍԻՆԱՆՈՒՄԻ

Ս. ՍԻՆԱՆՈՒՄԻ

Ս. ՍԻՆԱՆՈՒՄԻ

Ս. ՍԻՆԱՆՈՒՄԻ

ուրբաթ օրն (Մարտ 28) իւր մահկանացու կենաց ընթացքն կնքեց ի հասակի 57 ամաց, որոյ յուզարկաւորութեան հանդէսն շաբաթ օրն մեծաւ շքով կատարեցաւ ի Խաչակիւ ի ներկայութեան չորից Սրբազան Եպիսկոպոսաց, 48 Վարդապետաց եւ բազում քահանայից եւ մէկ քանի հազար ժողովողան:

Այս տխուր հանդէսին նաեւ ներկայ էին Յունաց Գեր. Պատրիարքական Փոխանորդն՝ մի Էփէնտիի հետ եւ Հրէից Բարունապետն:

Հանդէսն ակամ հանգուցելոյն բնակարանէն, եւ երբ Նուպար — Շահնապարեան վարժարանի առաջն հասաւ զազաղն, աշակերտներէն մին մի ճառ արտասանեց, յետ որոյ Եկեղեցի տարուելով Ս. Պատարագ մատոյց Արմաշու վանուց վանահայր Գեր. Տ. Խորէն Եպիսկոպոս Աշգեան, եւ սրտառու զամբանական խօսեցաւ Գեր. Տ. Խորէն Եպիսկոպոս Նար — Պէյ հանգուցելոյն առաքինի եւ երկիւղած կեանքն յիշատակելով եւ երկնային մխիթարութիւնն հայցելով նորա սգազգեաց գերդաստանին:

Յետ աւարտման Ս. Պատարագին՝ նոյն հանդիսի գերեզմանատուն տարուելով՝ իւր հարց տապանն ամփոփեցաւ հանգուցելոյն մարմինը:

Առաքինազարդ Տիրամայրն վարժապետեան այն բարեկիրթ, երկիւղած եւ զորովապոծ մայրերէն էր՝ որ ԱՍՏՈՒԱՆ եւ ԱԶԳ՝ այս երկու գերբնական բառերն իրենց ի վական նշանակութեամբն իւր կամին հետ ջախջախէր իւր որդեաց, այն մայրերէն էր՝ որ կատարեալ Քրիստոնէի մը պատկերն իւր վերայ վրկրէր եւ առաւել իւր վարքովն օրինակ հանդիսացած էր ներշնչել իւր որդեաց սրտին մէջ երկիւղածութեան, ճշմարիտ Աստուածապաշտութեան, առաքինութեան եւ անկեղծութեան կենսատու տարրը, ի մի բան՝ այն մայրերէն էր՝ յիմէ ծնունդ առին Հանճարներ ու Հրաշքներ, յորոց մին՝ այն է՝ Տ. Տ. Ներսէս Սրբազան Արքեպիսկոպոս, ամբողջ Թուրքիոյ Հայոցն նորոնտիր խնամող՝ Հովին եւ որդեակէր Հայրըն եղած է՝ եւ որ արժանապէս ամբողջ ազգին սիրոյն եւ համարման արժանացած է իւր ծիրբերովն եւ խոհական տաղանդովն:

Այսպիսի մայրերու ծնունդ է, որ Ազգին կեանք կուտայ, եւ եթէ իրենք իսկ մեռանին՝ անմահ են նորա Ազգին կենաց մէջ իրենց Թողած կենդանի յիշա-

Բարձրաշնորհ Սրբազան Պատրիարք Հօր Առաքինազարդ Տիրամայրն յետ երկարատեւ հիւանդութեան

տակներովն, որք իրենց հաղթողիս ծիրերովն ու
խոհուն հանձարովն՝ Ազգին կենալք, փառք և ողի են:

ԼԿՄ. Բ. 24. Աղբիւ 1.

Արարատայ խմբագրութիւն ևս ի հե-
ռուստ աստուստ իւր խորին վշտակցու-
թիւնը կ'այանէ Վեր. Ներսէս Ս. Արքե-
պիսկոպոսին՝ Հոգւոյն Արքայ հոգեպարար
մխիթարութիւնը վերակոչելով ի սփո-
փանա ազազեաց սրահն, և՛ հանգիստ և՛
երկնից արքայութեան արժանանալ քա-
րեմալութիւնով իւր հանգուցեալ մօր հո-
գւոյն համար:

Հեռեկալը արժան կ'համարինք Արա-
րատ ամառորոյ ընթերցողաց հաղորդե-
լոյ՝ Պօլսոյ Մասիս լրագրէն օրինակելով:

ՀԱՅՈՑ ԱՂԳՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ.

Տարւոյ սկիզբէն մայրաքաղաքիս մէջ հրատա-
րակիլ սկսած ՌԸՎԻԻ ՏԸ ԲՕՆԱԹԵՆԹԻՆՕԲԼ
անուն Գաղղիերէն շարաժական տետրակ մը ու-
րոյ Խմբագիր—Տնօրէնն է Պ. Ալֆրէտ ՏԸ Բաս-
թօն գիտնական Գաղղիացին, վերալիւնալ մակա-
գրով երկար՝ բայց ընտիր յօդուած մը հրատա-
րակած է, որոյ մէջ Հայոց ազգին և եկեղեցւոյն
անցերոյն և ներկային վրայ խիստ կարեւոր տեղե-
կութիւնք և միանդամայն պատմալի գիտողու-
թիւնք կան: զորս ազգասէր Հայ մը չկրնար ա-
ռանց հայրենասիրական ներքին հաճոյք մ'ըրա-
լու կարողը և իւր ազգն ու եկեղեցին առաւել
ևս սիրելու շարժողութիւն:

Այս զգացմամբ կը փութանք նախ՝ իրրեւ ազ-
գային խմբագիր՝ յանուն ազգին շնորհակալու-
թիւն յայանել ազնուատոհմ և արդարասէր խրմ-
բագրին և ապա յիշել յօդուածին քանի մը
կարեւոր մասերը թարգմանելով մեր արդոյ ըն-
թերցողաց ներկայացնել:

Յարգելի խմբագիրը՝ մեր ազգին Հայրագանց և
Արշակունեաց զիւցաղական դարերը համառօտիւ
յիշելէ ետեւ՝ երբ կարգն Արքայի օրով Հայոց

ազգին ի քրիստոնեութիւն դառնալուն կողայ
հետեւալ փասաւոր վկայութիւնները կուտայ
Հայաստանաց եկեղեցւոյ վրայ:

«Տիեզերական եկեղեցին կազմող քրիստոնեայ
եկեղեցեաց մէջ կրնամք՝ առանց ճշմարտութենէ
խոտորելու՝ Հայաստանեաց եկեղեցին ամենէն
հին եկեղեցեաց մին ճանչիլ, որովհետեւ ինչպէս
արդէն քինք, իւր սկիզբը մինչև քրիստոնէական
թուականին 34 տարին կը հասնի:

«Հայաստանեաց եկեղեցին արդար պարծանք
կրնայ յիշել իւր նախնիքը:

«Իւր պատմութիւնը պայծառացնողներն են՝
Առաքիւղք, իւր փառաւոր հիմնադիրները, Լու-
սաւորիչք, մեծաւուն Հայրապետք, Խոստովա-
նողք, Մարտիրոսք, Աստուածաբանք, Վարդա-
պետք, և փոյթեալներն քարոզիչք, որք Բրիտա-
նէական հաւատքը տարածելու աշխատեցան ամենէն
վտանգաւոր և տաղնապալից ժամանակներու մէջ:

«Հայաստանեաց եկեղեցին խիստ տխուր դա-
րեր անցուց, սարսափելի հալածանքներ ու դա-
ռըն փորձեր կրեց Բրիտանական համբարտե-
րութեամբ և այս ամեն նեղութեանց մէջ դար-
ձեալ իւր եկեղեցական ժողովն ը դուրսելով՝
հերետիկոսութիւններն ու մոլորութիւնները դա-
տապարտեց:

«Ուղղափառ հատաւոր և առաքելական աւան-
դութեանց աւանդապահ կեցաւ միշտ իւր ծիսա-
րանն ամենէն հիներէն մին է վասն զի Ս. Յակոբ
առաքելաւն առած է, որ Երուսաղէմաց առաջին
կաթիկոսն էր:

«Վերջապէս Հայաստանեաց եկեղեցին տասն
և ինն դարէ ի վեր իւր Միաթիւնը, Արքութիւ-
նը, Վաթիկանութիւնը, Առաքելականութիւնը
ու անկախութիւնը պահելով, և արեւելից և ա-
րեւմտից եկեղեցեաց հետ հանապաղ սիրով և եղ-
բայրութեամբ վարուելով, կրօնական ներողու-
թեան մեծ օրինակ մը տուած է աշխարհի:

«Հայաստանի մէջ կեցած և աշխարհի այլ և
այլ երկիրները ցրուած Հայոց թիւը հինգ միլիո-
նի կը հասնի, որոց երեք միլիոնի Հային Օսմա-
նեան հպատակ են, և մնացեալք Ռուսիոյ Պարս-
կաստանի Բուսանիոյ, Ասորիոյ, Հնդկաստանի և
Զինաստանի մէջ են: